

Բ Ա Ռ Ա Փ Ն Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. ԱՐՔՆ, ԳԵՂԱՐՔՆ

Արքն բարձր նշանակություն ունի իրեն «նիզակի, տեղ, աշխատ, որ բնորոշում է նաև ձ. Աճառյանը (Արմ. բառ., Ա, 661): Այս բացատրությամբ արդև նույնացվում է և՛ նիզակի, և՛ տեղի հետ, որտեղ, սակայն, բոլորովին տարբեր բաներ են: Յախոթ արտի մենք չունենք հայաց հին ղենքերի ու սաղմի զործիքների գիտական ուսումնասիրությունը և նկարագրությունը, որպեսզի հնարավորություն ունենալինք պարզելու դրանց տարբերություններն ամենայն մանրամասնությամբ ու ճշգրտությամբ, համեմատյան դեպս նիզակի և տեղի տարբերությունը հնչողությամբ բացահայտվում է ըստ դործածության: Տեղը սուր պար էր, որ դործածվում էր որպես ձևորոշ նեղակու ղենք, ի տարբերություն նեղակ, որ աղեղավ էր արձակվում. այս երկուսի տարբերությունը պարզորոշ կերպով երևում է հետևյալ կապակցության մեջ. «Շուն ոչ միայն առ քարանց հանդուրժվ է ձիգս՝ բնորոշվում կալով, այլև առ տիգաց և նևտից բնորոշվում յարձակելով հարուստացն» (Փիլոն, Ա. Լիսիմաքոս. բառ նշԲ): Միևնույն ժամանակ, տեղը արդև սուր սլաք աղուցվում էր ձիգակի ծայրը: Այս էլ հաստատվում է բազմաթիվ վկայություններով, որոնցից լավագույններն են. «Մանուկ զուլց նիզակին ի ձևերին կալեալ, և նիզական ի կառավան մատուցեալ ծնծէր զարջայն վարաղգատ» (Բուզանդ), «այսինքն՝ նիզակի տեղը (=սուր սլաքը) ձևորին բանելով, նիզակով (=նիզակի բնով՝ կոթով) ձևծում էր արքա վարաղգատին: «Տեսնենք զերևույթն և զսուր տեղ նիզակին» (նիքրեմ. բառ նշԲ):

Քանի որ նիզակը և տեղը բոլորովին տարբեր բաներ են, ապա արդև չի կարելի միաժամանակ թե՛ մեկը համարել, և թե՛ մյուսը: ՆշԲ-ի բերած դործածությունները ցույց են տալիս, որ արդև խոցելու ղենք էր. դա երևում է հատկապես հետևյալ կապակցությունից. «Ի պատե՜րազմի յախոթանէ սուր արղեանց ի սիրտ առնուցու» (Փիլոն, բառ նշԲ): Հարց է, թե նա նե՜տեւելու ղենք էր, թե ոչ, և էթն այս, ապա նույն էր, ինչ որ տեղը: Թե՛ առաջին և թե՛ երկրորդ հարցի պատասխանը տալիս են արդև բառից կազմված բարդությունները: Այսպես՝ ունենք արդևընկնց բառը, որ նշանակում է, թե արդև նետելու ղենք էր, ինչպես և՛ տեղը: Բայց տեղը սլաք էր, որ կարող էր և՛ առանձին դործածվել, և՛ աղուցվել նիզակին՝ որպես խոցող սուր ծայր: Արդև միայն նետելու ղենք էր, որինմն՝ նիզակից փոքր, որով և կարծես թե նույնանում է տեղի հետ, ինչպես կարելի է հասկանալ նաև արդևընկնց բառից: Սակայն դրա հետ միասին ունենք նաև արդևատղ բառը, որը ցույց է տալիս, որ արդև նույնպես իր ծայրին ուներ տեղ. որով և խոցում էր. դա պարզ կերպով երևում է հատկապես հետևյալ կապակցության մեջ. «Ոչ արդևատղաւ խոցեցաւ մարմին եղեալ բանն անշարժարելի» (Հովհաննես Սարկաւազ. բառ նշԲ): Այս բոլորից կարելի է եզրակացնել, որ արդև նիզակի նման, բայց շատ ավելի թեթև ղենք էր՝ ձևորով նետելու համար. նա չէր նույնանում նաև տեղի հետ, որ է՛լ ավելի փոքր ու թեթև նետելու ղենք էր (հմտ. «Ոչ տիգատրք և արդևատրք շուրջ», նշԲ, Ա., 350): Քանի որ արդև կարող էր իր վրա կրել տեղ, ապա պարզ է, որ նա ամուր փայտի ձող էր՝ սուր ծայրով կամ աղուցված սուր սլաքով (տեղով): Ըստ այսմ արդև բառը ծագում է հնիս. *ret-, *rot-, *rat- արմատի ստորին ձայնադարձով ձևից (*ret), որի է-ն օրինակաբար նախնական ձայնադարձից հետո (rē > r) և սկզբից ավելացել է ա ձայնավորը r-ից առաջ: Ցեղակից բառերից մեծին առավել մոտ են հին բարձր գերմ. ruota, գերմ. Rute «գավազան, ձող», հին եկեղեցաւալանական ratište, ratovište «նիզակարան» (Walde—Pokorny, II, 365): Հնդգնդրոպական արմատն ունեցել է «ձող, բարակ ծառարուն» իմաստը, որից և զարգացել են «գավառան, նիզակարան» և մեր արդև-ի իմաստները. իմաստի զարգացման համար համեմատելի է նեա բառը, որի հնիս. *nad- արմատը նշանակել է «եղեգն»:

Ուշադրով է նաև արդև բառի հոլովումը. նշԲ-ն տալիս է միայն հոգնակին՝ արդուեմ, արդեանց: Հայտնի է, որ և հանգող բառերը, նույնիսկ նրանք, որոնք նախապես և-ից առաջ ունե-

ցել են ի ձայնավորը, հոգնակի սեռականում ունենում են —անց և ոչ թե —եանց (հմմտ. հարսն-հարսին-հարսանց, դառն-դառին-դառանց են)։ Արդև բառի այս շնորոմը կարելի է բացատրել նրանով, որ եզակիում ունեցել է նախապես սեռականի —եան վերջավորություն, ինչպես՝ ծնունդ, գալուստ են։ Այս բացառությունը չի հիմնավորվում, որովհետև դադարանալիքը ձայնավորին հաջորդող ու-ով բառերը այդ հոլովման չեն ենթարկվում։ Մնում է ենթադրել, որ նախապես այդ բառն ունեցել է արդև, արդան, արդունք, արդանց ձևերը և արդին (արդինք) բառի համարանությունամբ ստացել է —եան հոլովումը։ Մեր այս ենթադրությունը հաստատվում է գեղարդն բառի հոլովումով, ըստ որում ունի և՛ գեղարդան, գեղարդանց, և՛ գեղարդանե, գեղարդանց ձևերը։ Սակայն սա նշանակում է նաև մի այլ բան. «Արմատական բառարանում» արդև և գեղարդն բառերի տակ է. Աճառյանը կասկածանքով հարցնում է, թե կապ ունենալ այդ բառերն իրար հետ։ Մեզ թվում է, թե կապը բացահայտ է։ Դրան իբրև ապացույց է ծառայում ամենից առաջ ձևաբանական հատկանիշը՝ հոլովման նույնությունը։ Բայց իմաստային կապն էլ ակնհայտ է. ինչպես գիտենք, գեղարդը նիզակից ավելի մեծ, խոցելու ձևնամարտի զենք էր։ Նրա միծնդտյան մասին կարելի է դադափար կազմել «Աստվածաշնչի» հետևյալ հատվածից. «Բռն գեղարդան նորա իբրև զստորի ոստայնակաց. և տէջ նորա ի վեցհարեւր սկեղէ երկաթոյ» (Ա Բազ., Ժէ, 7)։ Եթե սկիզբ հավասար է 6,8 դրամի, ինչպես ընդունված է, ապա՝ հատվածում հիշված գեղարդի միայն տեղի կշիռն է ավելի բան է կգ, իսկ բունը՝ ոստայնակի ստորու չափ։ Գեղարդի և նիզակի տարբերությունը շնշտվում է նաև «Հաղազս պիտոյից» գրքի հետևյալ հատվածում. «Ոչ ի գեղարդանց վիրավորելով, և ոչ ի նիզակաց» (ըստ ՆՃԲ)։ Այսպիսով, պետք է ընդունել, որ գեղարդն նիզակի ավելի մեծ տեսակն էր՝ հաստ ու երկար բնով և խոշոր տեղով, թեև ոչ շրջաճանձով գեղարդ-ի երկու տեսակ են տարբերում՝ մեծ, որ զործածվում էր ձեռնամարտում, և կարճ՝ որ հետվից նետում էին թշնամու վրա։ Քանի որ, ինչպես վերը ցույց տվեցինք, արդև նախապես նշանակել է բուն, ձող, կոր, ապա՝ գեղարդն բառի մեջ էլ այդ իմաստը պետք է ենթադրել, որով ամբողջ բառի նախնական նշանակությունը կլինի գեղի արդև, այսինքն՝ գեղի բուն, ինչպես ունենք նիզակաբուն (=նիզակի բուն)։ Ըստ այսմ, գեղ բաղադրիչն էլ պետք է նշանակած լինի տեղ, սլաք կամ նման մի բան, որ ճշտել հնարավոր կլինի միայն բառի ստուգաբանությունն իմանալու դեպքում։

2. ՄԱՄԲՐԷՆ ՎԵՐՇԱՆՈՂԻ ԿՈՌԻ ՔԱՌԸ

Բերելով այս բառը «Արմատական բառարանում», է. Աճառյանը գրում է. «Անստույգ բառ, որ մեկ անգամ գտնում եմ զործածված Մամբր. բ տպ. էջ 31. «Հերշտակն Ամբակում մարզարէ հացիւքն եփելովը և Թանիւքն հասնելովը զըրոր կերակուրն տարաւ հասոյց կոռին յերկիրն Բաբելացոց»։ Ակնարկում է Դան. ԺԳ, 32—37. հրատարակիչը համարում է «նշանակիչ գրոյն» և դնում է զվատառու. մյուս խմբագրության մեջ, էջ 56, խնդրական բառը պակասում է և ասվում է պարզապես «տարավ ի Բաբելոն» (Արմ. բառ., Գ, 1340)։ Դանիւլի մարզարեւոյն համապատասխան հատվածը հետևյալն է. «Եւ իբրև ետես թաղատորն՝ եթէ կարի տաղանայն զնա, հարկաւ ի ձեռս ետ նոցա զԴանիւլէ։ Եւ արկին զնա ի Գուրն առիւծուց. և անդ էր զվեց օր։ Եւ էին ի գրին եթն առիւծք. և տային նոցա հանապաղ երկուս մարդս և երկուս պատրուճակս. բայց յայնժամ ոչ ինչ արկին նոցա, զի վաղվաղակի կերիցեն զԴանիւլէ։ Եւ էր Ամբակում մարզարէ ի Հրէաստանի, և եփեաց թան, և բրդեաց հաց ի կուր. և երթայր յանդ՝ տանել մշակաց իւրոց։ Եւ ասէ հրէշտակ տեսան ցԱմբակում. տար զճաշդ զոր ունիւր ի Բաբելոն Դանիւլէ՝ ի գուրն առիւծուց։ Եւ ասէ Ամբակում. Տէ՛ր, զԲաբելոն՝ իմ չիք տեսնալ, և զգուրն ոչ գիտեմ ուր իցէ։ Եւ բռնեմ հնար հրէշտակն զղաղաթանէ նորա, և կալաւ զվարսից զխոյն նորա, և եղ զնա ի Բաբելոն ի վերայ զըրոյն սաստկութեամբ հռչակ իւրոյ։ Եւ աղաղակեաց Ամբակում և ասէ. Դանիւլէ, Դանիւլէ՛ արի՛, ա՛ռ զճաշդ զոր առաքեաց քեզ Աստուած։ Եւ ասէ Դանիւլէ. յիշեցնր զիս Աստուած և ոչ ընդ վայր հարեւր զսիրելիս քո։ Եւ յարեաւ Դանիւլէ և եկանք Այսպես, ուրեմն, վեց օր Դանիւլէն ընկած էր Գրի մեջ. ոչինչ չէր կերել և ոչինչ չէր խմել։ Բնականաբար նա քաղցից քուլացել, տկարացել, ուժից ընկել էր։ Հետեւաբար Մամբրեի «Հասոյց կոռին յերկիրն Բաբելացոց» պետք է հասկանալ՝ «Հասցրեց տկարին (թուլին, ուժից ընկածին)՝ բաբելացիների երկիրը»։ Ուրեմն կոռ նշանակում է «թուլ, տկար, ուժից ընկած»։ Այս իմաստով նա կապվում է հետ. «զեր-արմատի հետ, որ նշանակում է «ծոռել, գալարել, ոլորել» և որ ցնդակից լեզուներում ստացել է, այլ իմաստների հետ, նաև «թուլ, տկար, թմրած, անզգա» նշանակությունը, ինչպես՝ հին իուլանդերեն gerbach «խորշումած, թառամած», հին սլավոններեն гѣнѣн «ամեջ, կռնակ. ջղաձգություն»։

grābъ «աղուշ, գոհճիկ, անկիրթ», նոր բարձր գերմ. «բախարական») krapf «աննշան, աննկատելի», նորմեդերեն «թույլ՝ խեղճ մարդ», krasen «թույլ, տկար, նկուն», հին բարձր գերմ. krankolōn «թուրանալ. սալթաբել», գերմ. krank «հիվանդ, տկար» և ալլն (Walde—Pokorny, 1, էջ 593—598)։ Այս մեկնության իրրե սպասցույց սնենք հնիս. նույն արմատից ծագած դաւառական կոտ «կտր, ծուռ» և կռանալ (արմատը՝ կոտ) բառերը, որոնց մասին գրել ենք առանձին՝ կոտ և կեռ բառերի հետ հապելով։